ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՇԻՐԱԿԱՄՈՒՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

գ. Շիրակամուտ

№—Ե -03/31

«14» 03. 2016թ.

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Նալբանդյան

Ձեզ ենք ներկայացնում Շիրակամուտ համայնքի ավագանու թիվ 5-Ա և թիվ 6-Ա որոշումները:

Առդիր 3էջ:

Համայնքի ղեկավար՝ Ս.Մազմանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

գ.
Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Շիրակամուտ համայնք,հեռ.0255-6-15-01

ՈՐՈՇՈՒՄ
,,04 " մարտի 2016 թվականի N6-Ա

ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԹԱՂՄԱՆ ԾԱԽՍԻ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ և 20-րդ կետերով, 44-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, համայնքի ավագանու 2014 թվականի հոկտեմբերի 16-ի «Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ Շիրակամուտ համայնքի ղեկավարին վերապահված կամավոր լիազորությունների իրականացման և դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացման կարգը հաստատելու մասին» թիվ 19-Ա որոշմամբ, հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զինծառայողների ընտանիքների սոցիալական պատասխանատվության բարելավման, զինծառայությունից արձակվածների, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունները՝

Շիրակամուտ համայնքի ավագանին որոշում է.

1.Բավարարել Շիրակամուտ համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեի 10/7/1 դասակարգման 4729 հոդվածից հատկացնել սոցիալական օգնություն, յուրաքանչյուրին՝30000 /երեսուն հազար/դրամ, թաղման ծախսի համար:

2.Համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ սույն որոշման կատարման ուղղությամբ և որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում բնակիչներին վճարել հատկացված գումարները:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

| Համայնքի ավագանու անդամներ | կողմ/5/ | դեմ /0/ | ձեռնպահ/0/ |
|---|---|---|---|
| Մ.Նալբանդյան | [signature] | | |
| Կ..Սաղաթելյան | [signature] | | |
| Ս. .Պապոյան | [signature] | | |
| Հ.Նալբանդյան | [signature] | | |
| Ա.Պապոյան | [signature] | | |

Համայնքի ղեկավար՝ Ս.Մազմանյան

Հավելված

ՀՀ Լոռու մարզի

Տիրակամուտ համայնքի ավագանու

2016 թվականի մարտի 4-ի N 6-Ա որոշման

# ՑՈՒՑԱԿ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ ԹԱՂՄԱՆ ԾԱԽՍԻ ՀԱՄԱՐ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

1) Պապոյան Հովհաննես Ռաֆիկի - երեսուն հազար դրամ,
2) Տոնիկյանի Մարիետա Տոնոյի - երեսուն հազար դրամ,
3) Սաղաթելյան Անահիտ Հովհաննեսի - երեսուն հազար դրամ,

ԸՆԴԱՄԵՆԸ՝ -իննսուն հազար դրամ:

ՏԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ [signature] Հ.ԵՐԱՆՈՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

## ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Շիրակամուտ համայնք,հեռ.0255-6-15-01

## ՈՐՈՇՈՒՄ

,, 04 " մարտի 2016 թվականի N5-Ա

### ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016Թ. ՄԱՐՏԻ 4-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,, Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի դրույթներով՝ ավագանին

Որոշում է

Հաստատել Շիրակամուտ համայնքի 2016թ. մարտի 4-ի նիստի օրակարգը

ՕՐԱԿԱՐԳ

2016թ.ի մարտի 4-ի թիվ 3 նիստի

1.Շիրակամուտ համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին թաղման ծախսի գումար հատկացնելու մասին:

| Համայնքի ավագանու անդամներ | կողմ/5/ | դեմ /0/ | ձեռնպահ/0/ |
|---|---|---|---|
| Մ.Նալբանդյան | | | |
| Կ..Սաղաթելյան | | | |
| Ս. .Պապոյան | | | |
| Հ.Նալբանդյան | | | |
| Ա.Պապոյան | | | |

Համայնքի ղեկավար՝ Ս.Մազմանյան